ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/87

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.03.2021թ. թիվ 26/26-1/4732-2021 գրությամբ «Էլիքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 24.03.2021թ. թիվ 1/18-2/16495-2021 գրության հիման վրա 31.03.2021թ. թիվ 26/26-1/4732-2021 գրությամբ նախաձեռնել է «Էլիքս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Էլիքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էլիքս» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության 31.03.2021թ թիվ 26/26-1/4732-2021 գրությամբ «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգի, ներկայացվում է «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ի գրավոր դիրքորոշումը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/009» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում, Հրավերում նշված ձևաչափով «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ն գնային առաջարկին կից ներկայացրել է մատուցվելիք ծառայությունների միավոր գները: Այն իրենից ըստ էության ենթադրում է գնային առաջարկի բաղկացուցիչ մաս:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 526-Ն որոշման (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետը ամրագրում է, որ Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումների մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացվում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացավ դեպքերի:

Այնուհանդերձ ներկայացվում է մի շարք հանգամանքներ, որոնք Հրավերով սահմանված ակնառու թերություններ են, որ ի հայտ են եկել գնահատման փուլում, հաշվի առնելով և վերլուծելով ընդհանուր գործընթացը:

Համաձայն «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ դրույթի՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝ խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

Հրավերի Հավելված 1-ում՝ «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» բաժնում նշված է.

- Չ/Հ,
- Անվանումը,
- Տեխնիկական բնութագիրը,
- Չ/Մ,
- Քանակը,
- Առավելագույն գինը,
- Մատուցման վայրը,
- Մատուցման ժամկետը:

«Տեխնիկական բնութագիր» սյունում, ՀՀ ՊԵԿ-ի կողմից, տրված է համապատասխան ձևակերպումները:

«Քանակ» սյունակում գրված է «1» թիվը:

«Տեխնիկական բնութագիր» սյունում, տրված ձևակերպումներն ունեն որոշակի մտային թերություններ, պարունակում են այնպիսի տվյալներ, որոնք իրենց հերթին առաջ են բերում տարակուսելի իրավիճակներ և ինքնին միտում ստեղծում Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ դրույթի:

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» բաժնում «Տեխնիկական բնութագիր» սյունում նշված ձևակերպումների, ինչպես նաև Հրավերով տրված Հավելված 2.1-ի՝ «ՄԱՏՈՒՑՎԵԼԻՔ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐ ԳՆԵՐԸ» վերնագրով աղյուսակի «Ծառայության տեսակ» սյունում տրված ձևակերպումների մեջ առկա են սկզբունքային տարբերություններ: Մասնավորապես նշենք «Տեխնիկական բնութագիր» սյունում նշված 2-րդ կետի և Հավելված 2.1-ի՝ «ՄԱՏՈՒՑՎԵԼԻՔ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐ ԳՆԵՐԸ» վերնագրով աղյուսակի «Ծառայության տեսակ» սյունի 15 և 16 կետերում նշված «3 ամիս» արտահայտության անհասկանալի տարբերությունը:

Վերոնշյալ 5-րդ, 6-րդ կետերում նշվածը, կարծես, անհիմն կերպով բարդացնում է գնման գործընթացը և շփոթմունքի մեջ գցում մասնակցին: Սակայն այս հանգամանքը հիմնավորվում է հաջորդող 8-րդ կետում:

Հատուկ ուշադրության է արժանի այն փաստը, որ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/009» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում մասնակիցներ «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ի, «Ֆիչըր» ՍՊԸ-ի և «Փի-Արտ» ՍՊԸ-ի գնային առաջարկին կից ներկայացված մատուցվելիք ծառայությունների միավոր գներում առկա է անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ծառայությունների մատուցման միավոր գների և տեխնիկական բնութագրում նշված քանակների հանրագումարը չէր համապատասխանում մասնակիցների կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գումարին: 3 մասնակիցների կողմից առկա անհամապատասխանությունների փաստը խոսում է, Հրավերով սահմանված՝ հավելյալ տվյալների ներկայացման բարդեցված իրավիճակի մասին:

Հատուկ ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ ոչ միայն 2021 թվականին «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/009» ծածկագրով մրցույթի շրջանակում է եղել մասնակիցների կողմից ներկայացված սույն անհամապատասխանությունը, այլև, ամբողջությամբ նույն հիմքով անհամապատասխանություն եղել է նաև, նախորդ տարի, 2020 թվականի ՀՀ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/3» ծածկագրով ընթացող, ըստ էության, նույն մրցույթի նախորդ տարվա գնման շրջանակում:

Վերոնշյալ 8-րդ և 9-րդ կետերում նշվածը փաստում է, որ սույն բովանդակությամբ գնման, Հրավերով սահմանված՝ հավելյալ տվյալների ներկայացման ձևաչափում առկա են այնպիսի խնդիրներ, որը մշտապես առաջ է բերում անհամապատասխանության իրավիճակ:

Հիմնվելով 2021 թվականի, ինչպես նաև 2020 թվականի նույն մրցույթի հայտերի գնահատման արդյունքների վրա, այն է՝ գնային առաջարկին կից ներկայացված մատուցվելիք ծառայությունների միավոր գներում առկա անհամապատասխանությունների մասով, հանգում ենք, որ տվյալ անհամապատասխանությունները առաջ են եկել բացարձակապես Հրավերով տրված ձևակերպումների արդյունքում և առկա են եղել բոլոր մասնակիցների մոտ, ընդհուպ նույնիսկ այն մասնակցի մոտ, որ մասնակցություն է ունեցել և 2020 թվականի մրցույթին և 2021 թվականի մրցույթին:

Բացի այդ, ՀՀ ՊԵԿ-ը, նշում է, որ «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ի, «Ֆիչըր» ՍՊԸ-ի և «Փի-Արտ» ՍՊԸ-ի գնային առաջարկին կից ներկայացված մատուցվելիք ծառայությունների միավոր գներում առկա էին անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ծառայությունների մատուցման միավոր գների և տեխնիկական բնութագրում նշված քանակների հանրագումարը չէր համապատասխանում մասնակիցների կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գումարին: Ապա՝ հավելում, որ շտկումից հետո, «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մատուցվելիք ծառայությունների միավոր գներում կրկին առկա էր անհամապատասխանությունները՝ ծառայությունների մատուցման միավոր գների և տեխնիկական բնութագրում նշված քանակների հանրագումարը չէր համապատասխանում «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գումարին, որի արդյունքում «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ի ներկայացված հայտը մերժվել է: Այս համատեքստում Ձեր ուշադրությունն ենք հրավիրում, այն հանգամանքի վրա, որ Հրավերի Հավելված 1-ում՝ «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» բաժնում առկա «Քանակ» սյունակում նշված «1» թիվը, իսկ «Տեխնիկական բնութագիր» սյունակում ձևակերպումներում առկա այնպիսի թվեր և ժամկետներ, որոնք չեն համապատասխանում Հավելված 2.1-ի՝ «ՄԱՏՈՒՑՎԵԼԻՔ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐ ԳՆԵՐԸ» վերնագրով աղյուսակի «Ծառայության տեսակ» սյունում տրված ձևակերպումների՝ թվերի և ժամկետների հետ:

Համաձայն Կարգի 41-րդ կետի, 15.03.2021թ. ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրվել է շտկման հնարավորություն:

Նույն Կարգի 41-րդ կետը ամրագրում է, որ Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները: Սակայն ուղարկված ծանուցման մեջ մանրամասն նկարագրված չէ հայտնաբերված անհամապատասխանությունը, այլ ըստ ՀՀ ՊԵԿ-ի գնահատման, տրված է անհամապատասխանության վերաբերյալ ընդհանուր ձևակերպում (տե՛ս Հավելված 3-ում), որտեղ նշված արտահայտություններում կրկին առկա է տարընթերցում: Այդ ձևակերպման մեջ նշված չէ, թե խոսքը ինչպիսի գումարման մեթոդաբանության մասին է և մասնակիցը ինչպես պետք է վերլուծություններ կատարի քանակների մասին, եթե արդեն իսկ այդ մասին առանձին տրված է Հավելված 2.1-ի՝ «ՄԱՏՈՒՑՎԵԼԻՔ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐ ԳՆԵՐԸ» վերնագրով աղյուսակի «Ծառայության տեսակ» սյունում: Բացի այդ մանրամասնված չէ թե խոսքը «Տեխնիկական բնութագրում» առկա ինչ քանակների մասին

է, եթե սահմանված ձևաչափում արդեն իսկ առկա է «Քանակ» սյուն, որտեղ նշված է «1» թիվը: ՀՀ ՊԵԿ-ի կողմից ծանուցման մեջ եղել է մասնավորեցում, սակայն ոչ մանրամասնում: Սակայն վերոնշյալ Կարգի 41-րդ կետում ամրագրված է մասնակցին առկա անհամապատասխանությունը մանրամասնելու անհրաժեշտության մասին: Ավելին հանձնաժողովի արձանագրության և «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ին ուղարկված ծանուցման մեջ մանրամասն և բավարար հստակությամբ չեն նկարագրվել հայտնաբերված անհամապատասխանությունները: Ուսումնասիրելով դիրքորոշմանը կից ներկայացված Հավելված 3-ը, ինչպես նաև վերոնշյալ փաստերը, ակնհայտ է դառնում, որ և՛ ծանուցումը և՛ Հրավերը ինքը պարունակել է ոչ հիմնավոր մոտեցումներ:

Համաձայն Կարգի 42-րդ կետի՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

16.03.2021թ. «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ՊԵԿ-ին է ուղարկվել շտկված տարբերակը, սակայն ՀՀ ՊԵԿ-ում այն գնահատվել է կրկին չհամապատասխանող և մերժվել է: Սակայն վարքագծային տեսանկյունից «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից կատարվել է 42-րդ կետի պահանջը և ուղարկվել է շտկված տարբերակը:

Կարգի 42-րդ կետը սահմանում է, որ Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է: Այստեղ խոսք չկա անբավարար գնահատված և մերժված հայտի արդյունքում նախաձեռնվող և տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգի մասին: Հետևաբար՝ եթե, հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է, ապա ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը, սակայն չի նախաձեռնվում անբավարար գնահատված և մերժված հայտի մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու

ընթացակարգ: Ավելին՝ տվյալ պարագայում «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ն չի հանդիսանում առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Համաձայն Կարգի 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու արդյունքում է նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

ՀՀ ՊԵԿ-ն դիմելով ՀՀ Ֆինանսների նախարարությանը, նշել է, որ հիմք է ընդունում Կարգի 45-րդ կետի պահանջները՝ «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար, չմանրամասնելով և չհիմնավորելով թե խոսքը 45-րդ կետի, որ պահանջի մասին է:

Համաձայն ՀՀ Գնումների մասին» Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

«ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացվել է Հավելված N 2 գնային առաջարկը, որին կցվել է Հավելված N 2.1՝ «ՄԱՏՈՒՑՎԵԼԻՔ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐ ԳՆԵՐ»-ի ցանկը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.03.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ մասնակից բոլոր երեք կազմակերպությունների կողմից գնային առաջարկին կից ներկայացված մատուցվելիք ծառայությունների միավոր գներում առկա է անհամապատասխանություններ:

Նույն արձանագրության համաձայն՝ Կարգի 41-րդ կետի ծանուցվել է արձանագրված թերությունները շտկելու վերաբերյալ:

Համաձայն Կարգի 41-րդ կետի, Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ պետք է մանրամասն նկարագրված լիներ հայտնաբերված անհամապատասխանությունները, ինչը չի կատարվել:

Այնուամենայնիվ «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից կատարվել է շտկումը և ուղարկվել: Ինչը խոսում է պարտավորությունների կատարման և իրավաչափ գործունեության մասին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.03.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկին կից ներկայացված մատուցվելիք ծառայությունների միավոր գներում կրկին առկա են անհամապատասխանություններ, որի արդյունքով, նույն արձանագրությամբ հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է, նշենք, որ առկա չէ հիմնավորում, թե խոսքը ինչպիսի առարկայական, օրինակով ցուցադրված անհամապատասխանության մասին է և/կամ ինչպիսի բանաձև և/կամ մոտեցում է կիրառվել:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումների մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացվում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացավ դեպքերի:

Համաձայն վերոնշյալի, «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/009» ծածկագրով գնման ընթացակարգի Հրավերով նախատեսված «ՄԱՏՈՒՑՎԵԼԻՔ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐ ԳՆԵՐ»-ի ցանկը, ըստ էության հանդիսանում է գնային առաջարկի բաղկացուցիչ մաս:

Ուսումնասիրելով վերոնշյալ փաստերը՝ ակնհայտ է դառնում, որ.

1)«ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից չի կնքվել պայմանագիր, հետևաբար չի խախտվել այն,

2) Համաձայն Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի, գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնած պարտավորությունը չի տարածվում մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման վրա,

3) «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ի վարքագիծը չի համապատասխանում Կարգի 45-րդ կետի դրույթներին: Հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ն

հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացրել է հրավերով նախատեսված փաստաթղթերը, ավելին՝ շտկման ծանուցումը ստանալուց հետո, «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ուղարկել է շտկված տարբերակը, սակայն այն կրկին գնահատվել է անբավարար և մերժվել, ինչը չի կարող գնահատվել, որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, քանզի գործընթացը կատարվել է կարգին համապատասխան և իրավաչափ,

4) «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ն չի հանդիսանում ընտրված մասնակից, գնային առաջարկով ցանկացած պարագայում չի զբաղեցնում առաջին հորիզոնական և, հետևաբար չէր կարող հրաժարվել պայմանագրի կնքումից,

«ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ն հայտերը բացելուց հետո չի հրաժարվել գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Հիմք ընդունելով վերանշյալ փաստերը և ամփոփելով դիրքորոշումը, հայտնում ենք, որ.

1) Սույն Հրավերի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» բաժնում «Տեխնիկական բնութագիր» սյունի ձևակերպման և Հավելված 2.1-ի՝ «ՄԱՏՈՒՑՎԵԼԻՔ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐ ԳՆԵՐԸ» վերնագրով աղյուսակի «Ծառայության տեսակ» սյան մեջ առկա էին այնպիսի անհամապատասխանություններ, որի հիմնավոր լինելու հանգամանքը տրվում է միայն հետագայում, հայտերի գնահատման փուլում, երբ ի հայտ է գալիս այնպիսի հանգամանք, որ ցուցադրում է բոլոր մասնակիցների մոտ առկա խնդիրը, ինչից հետևում է, որ Հրավերում իսկապես առկա է եղել այնպիսի շփոթեցնող ձևակերպումներ, որ բոլոր մասնակիցները, ըստ ՀՀ ՊԵԿ-ի թույլ են տվել անհամապատասխանություններ: Ընդ որում, նման անհամապատասխանություն ստացվել է նախորդ տարվա մրցույթի շրջանակում ևս: Եվ որպեսզի ապագայում նման անհարկի խնդիրներ չառաջանան այլ մասնակիցների մոտ, անհրաժեշտություն կա հետևողականորեն շտկելու Հրավերում առկա շփոթմունքները, որը նկատելի է դարձել մրցույթից հետո, հերթական անգամ, շուրջ 3 մասնակիցների մոտ (կրկին անհամապատասխանությունների պատճառով), այդ թվում նախորդ տարի նույնպես: Այդ շփոթմունքը կարող է նվազեցնել հնարավոր մասնակիցների թիվը, խաթարելով հավասար պայմաններում մրցակցությանը:

2) Կարգի 42-րդ կետի մասնակցի կողմից կատարման, այն է՝ շտկված տարբերակը ներկայացնելը, սակայն հայտերի գնահատող հանձնաժողովի կողմից այն կրկին անհամապատասխան համարելը և մերժելը, ըստ նույն այդ կետի չի առաջացնում

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ: Բացի այդ «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ն վարքագծի տեսանկյունից կատարել է Կարգի համապատասխան պահանջը, ուղարկելով շտկված տարբերակը, որը կրկին անհամապատասխան է համարվել և մերժվել:

3)Սույն Հրավերի շրջանակում Կարգի 42-րդ կետ ելքային արդյունքը որևէ կերպ չի կապվում և չի ներառվում Կարգի 45-րդ կետի հետ: Քանզի կատարված է 42-րդ կետի պահանջը, այն է «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից ուղարկվեր շտկված տարբերակը: Հետևաբար և՛ վարքագծային տեսանկյունից, և՛ պարտավորությունների կատարման տեսանկյունից տեղի է ունեցել իրավաչափ գործողություն:

4) «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ի վարքագիծը չի համապատասխանում Կարգի 45-րդ կետի դրույթներին: Հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացրել է հրավերով նախատեսված փաստաթղթերը, ավելին՝ շտկման ծանուցումը ստանալուց հետո, «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ուղարկել է շտկված տարբերակը, սակայն այն կրկին գնահատվել է անբավարար և մերժվել, ինչը չի կարող գնահատվել, որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, քանզի գործընթացը կատարվել է կարգին համապատասխան և իրավաչափ:

5) Համաձայն Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի, գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում չի համարվում գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերը:

6) Համաձայն Կարգի 41-րդ կետի, մասնավորապես Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ պետք է մանրամասն նկարագրված լիներ հայտնաբերված անհամապատասխանությունները, ինչը չի կատարվել:

«ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ն առաջարկում է ուսումնասիրել Հրավերի բովանդակությունը, ըստ վերոնշյալ կետերի, մասնավորապես «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» բաժնում «Տեխնիկական բնութագիր» սյունում նշված ձևակերպումների, ինչպես նաև Հրավերով տրված Հավելված 2.1-ի՝ «ՄԱՏՈՒՑՎԵԼԻՔ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐ ԳՆԵՐԸ» վերնագրով աղյուսակի «Ծառայության տեսակ» սյունում տրված ձևակերպումների մեջ առկա սկզբունքային տարբերությունները, այդ թվում «Տեխնիկական բնութագիր» սյունում նշված 2-րդ կետի և Հավելված 2.1-ի՝ «ՄԱՏՈՒՑՎԵԼԻՔ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐ ԳՆԵՐԸ» վերնագրով աղյուսակի

«Ծառայության տեսակ» սյունի 15 և 16 կետերում նշված «3 ամիս» արտահայտության անհասկանալի տարբերությունը: Վերջինս ակնհայտ շփոթեցնող բնույթ ունի և բացի այդ շտկման ծանուցումը չի կատարվել Կարգի 41-րդ կետի համաձայն, այն է չի տրվել հայտնաբերված անհամապատասխանությունների մանրամասն նկարագրում: Նաև հատուկ ուշադրության է արժանի, որ այս խնդիրը առաջացել է 3 մասնակիցների մոտ, ինչպես նաև նախորդ տարվա նույն մրցույթի շրջանակում մեկ այլ մասնակցի մոտ նույնպես, ով այս տարի կրկին մասնակցել է մրցույթին և կրկին թույլ տվել նման անհամապատասխանություն:

Վերոնշյալ հիմքերով պայմանավորված 31.03.2021թ թիվ 26/26-1/4732-2021 գրությամբ նախաձեռնված «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը ենթակա է մերժման»:

Ի լրումն վերոնշյալ դիրքորոշման Ընկերությունը գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հաշվի առնելով «Կորոնավիրուսային հիվանդության» համավարակի շարունակական կոնտակտային շփմամբ և առողջական խնդրով պայմանավորված 09.04.2021թ. նիստին ներկա չգտնվելը, ի լրացում 08.04.2021թ. ՍՑ-ՆԳ-2021/87 ընթացակարգի շրջանակում հայտնած դիրքորոշման Ձեզ եմ ներկայացնում հետևյալ փաստական տվյալները ըստ դիտարկտիկ նյութերի.

1) Հրավերի Հավելված 1-ի, «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» բաժնի «Տեխնիկական բնութագիր» սյունի ձևակերպման մեջ, առկա է հետևյալ միտքը,

2) Հրավերի Հավելված 2.1-ի՝ «ՄԱՏՈՒՑՎԵԼԻՔ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐ ԳՆԵՐԸ» վերնագրով աղյուսակի «Ծառայության տեսակ» սյունում տրված ձևակերպումների մեջ առկա սկզբունքային տարբերությունները, այդ թվում «Տեխնիկական բնութագիր» սյունում նշված 2-րդ կետի և Հավելված 2.1-ի՝ «ՄԱՏՈՒՑՎԵԼԻՔ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐ ԳՆԵՐԸ» վերնագրով աղյուսակի «Ծառայության տեսակ» սյունի 15 և 16 կետերում նշված «3 ամիս»,

3) Նկար 1-ում և Նկար 2-ում ցուցադրված է առկա ակնհայտ տարբերությունը, որի վերաբերյալ շփոթեցնող իրավիճակ է առաջանում, երբ ՀՀ ՊԵԿ-ը ծանուցում է, որ ծառայությունների մատուցման միավոր գների և տեխնիկական բնութագրում նշված քանակների հանրագումարը չի համապատասխանում մասնակիցների կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գումարին: Նկար 1-ում գրված է 1 ամիս, իսկ

Նկար 2-ում՝ նույն ծառայությունը 3 ամիս: Հաշվի առնելով այս և նմանատիպ այլ օրինակներ, Կարգի 41-րդ կետի համաձայն ՊԵԿ-ի կողմից շտկման ծանուցման մեջ պետք է լիներ մանրամասնում, ինչը չի կատարվել:

4) Բացի այդ, Հրավերի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» բաժնում «Տեխնիկական բնութագիր» սյունի ձևակերպման և Հավելված 2.1-ի՝ «ՄԱՏՈՒՑՎԵԼԻՔ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐ ԳՆԵՐԸ» վերնագրով աղյուսակի «Ծառայության տեսակ» սյան մեջ առկա էին այնպիսի անհամապատասխանություններ, որի հիմնավոր լինելու հանգամանքը տրվում է միայն հետագայում, հայտերի գնահատման փուլում, երբ ի հայտ է գալիս այնպիսի հանգամանք, որ ցուցադրում է բոլոր մասնակիցների մոտ առկա խնդիրը, ինչից հետևում է, որ Հրավերում իսկապես առկա է եղել այնպիսի շփոթեցնող ձևակերպումներ, որ բոլոր մասնակիցները, ըստ ՀՀ ՊԵԿ-ի թույլ են տվել անհամապատասխանություններ,

5) Բացի այդ, ՀՀ ՊԵԿ-ը, նշում է, որ «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ի, «Ֆիչըր» ՍՊԸ-ի և «Փի-Արտ» ՍՊԸ-ի գնային առաջարկին կից ներկայացված մատուցվելիք ծառայությունների միավոր գներում առկա էին անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ծառայությունների մատուցման միավոր գների և տեխնիկական բնութագրում նշված քանակների հանրագումարը չէր համապատասխանում մասնակիցների կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գումարին: Ապա՝ հավելում, որ շտկումից հետո, «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մատուցվելիք ծառայությունների միավոր գներում կրկին առկա էր անհամապատասխանությունները՝ ծառայությունների մատուցման միավոր գների և տեխնիկական բնութագրում նշված քանակների հանրագումարը չէր համապատասխանում «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գումարին, որի արդյունքում «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ի ներկայացված հայտը մերժվել է: Այս համատեքստում Ձեր ուշադրությունն ենք հրավիրում, այն հանգամանքի վրա, որ Հրավերի Հավելված 1-ում՝ «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» բաժնում առկա «Քանակ» սյունակում նշված «1» թիվը, իսկ «Տեխնիկական բնութագիր» սյունակում ձևակերպումներում առկա այնպիսի թվեր և ժամկետներ, որոնք չեն համապատասխանում Հավելված 2.1-ի՝ «ՄԱՏՈՒՑՎԵԼԻՔ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐ ԳՆԵՐԸ» վերնագրով աղյուսակի «Ծառայության տեսակ» սյունում տրված ձևակերպումների՝ թվերի և ժամկետների հետ: Նկար 3-ում, ցուցադրվածը առավել

շփոթեցնող է, որ առաջ է գալիս այն բանից հետո, երբ ՀՀ ՊԵԿ-ը իր շտկման ծանուցման մեջ նշում է «տեխնիկական բնութագրում նշված քանակների» արտահայտությունը:

«ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ն խնդրում է ուսումնասիրել Հրավերի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» բաժնում «Տեխնիկական բնութագիր» այունում նշված ձևակերպումները և համեմատել Հրավերով տրված Հավելված 2.1-ի՝ «ՄԱՏՈՒՑՎԵԼԻՔ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐ ԳՆԵՐԸ» վերնագրով աղյուսակի հետ»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/87 ընթացակարգի շրջանակներում 09.04.2021թ. ժամը 10:50-ին և 14.04.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.03.2021թ. թիվ 1/18-2/16495-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/009» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ի, «Ֆիչըր» ՍՊԸ-ի և «Փի-Արտ» ՍՊԸ-ի գնային առաջարկին կից ներկայացված մատուցվելիք ծառայությունների միավոր գներում առկա էին անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ծառայությունների մատուցման միավոր գների և տեխնիկական բնութագրում նշված քանակների հանրագումարը չէր համապատասխանում մասնակիցների կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գումարին: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 526-Ն որոշման 41-րդ կետի (այսուհետ՝ կարգի) 15.03.2021թ-ին «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ին, «Ֆիչըր» ՍՊԸ-ին և «Փի-Արտ» ՍՊԸ-ին ծանուցվել է ներկայացնել միավոր արժեքների շտկված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում «Ֆիչըր» ՍՊԸ-ն և «Փի-Արտ» ՍՊԸ-ն շտկել են առկա անհամապատասխանությունները, սակայն «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մատուցվելիք ծառայությունների միավոր գներում կրկին առկա էր անհամապատասխանություններ՝ ծառայությունների մատուցման միավոր գների և տեխնիկական բնութագրում նշված քանակների հանրագումարը չէր

համապատասխանում «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գումարին, որի արդյունքում «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ի ներկայացված հայտը մերժվել է:

Հիմք ընդունելով կարգի 45-րդ կետի պահանջները՝ «ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար Ձեզ եմ ներկայացնում ընթացակարգի փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/87 ընթացակարգի շրջանակներում 09.04.2021թ. ժամը 10:50-ին և 14.04.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/87 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/87 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար հասարակության հետ կապերի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/009» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էլիքս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.03.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Էլիքս» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկին կից ներկայացված մատուցվելիք ծառայությունների միավոր գներում (Հավելված 2.1) առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ մատուցվելիք ծառայությունների միավոր գների և տեխնիկական բնութագրում նշված քանակների հանրագումարը չի համապատասխանում Ընկերության կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի (Հավելված 2) ընդհանուր գումարին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.03.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել, այն հիմնավորմամբ, որ «Էլիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մատուցվելիք ծառայությունների միավոր գներում՝ Հավելված 2.1-ում, կրկին առկա են անհամապատասխանություններ՝ ծառայությունների մատուցման միավոր գների և տեխնիկական բնութագրում նշված քանակների հանրագումարը չի

համապատասխանում Ընկերության կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գումարին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.03.2021թ. թիվ 26/26-1/4732-2021 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 24.03.2021թ. թիվ 1/18-2/16495-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, ՍՑ-ՆԳ-2021/87 ընթացակարգի շրջանակներում «Էլիքս» ՍՊԸ-ի հայտնած դիրքորոշումը, ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/009» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների

հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է

անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Կարգի 43-րդ կետի համաձայն՝ Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

1) հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և սույն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ: ***<u>Ընդ որում, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները</u>*** և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար հասարակության հետ կապերի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/009» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էլիքս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.03.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Էլիքս» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկին կից ներկայացված մատուցվելիք ծառայությունների միավոր գներում (Հավելված 2.1) առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ մատուցվելիք ծառայությունների միավոր գների և տեխնիկական բնութագրում նշված քանակների հանրագումարը չի համապատասխանում Ընկերության կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի (Հավելված 2) ընդհանուր գումարին:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը մեկ աշխատանքային օրով և առաջարկել Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.03.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել, այն հիմնավորմամբ, որ «Էլիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մատուցվելիք ծառայությունների միավոր գներում՝ Հավելված 2.1-ում, կրկին առկա են անհամապատասխանություններ՝ ծառայությունների մատուցման միավոր գների և տեխնիկական բնութագրում նշված քանակների հանրագումարը չի համապատասխանում Ընկերության կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գումարին:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/009» ծածկագրով ընթացակարգի հրավերի՝ պայմանագրի նախագծին կից հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի (հետայսու՝ Տեխնիկական բնութագիր) համաձայն՝ գնման առարկայի «Հասարակության հետ կապերի ծառայություններ»-ի ձեռքբերման համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

«Հասարակության հետ կապերի ծառայություններն անհրաժեշտ են հարկ վճարողներին և հանրության լայն շրջանակին ՊԵԿ ռազմավարական նախաձեռնությունների իրագործմանը նախապատրաստելու համար: Հանրություն–ՊԵԿ հաղորդակցության արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսված հասարակության հետ կապերի ծառայությունները պետք է ուղղված լինեն հարկ վճարողների իրազեկվածության մակարդակի և հարկերը վճարելու իրավագիտակցության բարձրացմանը, ՊԵԿ գործունեության, հարկային և մաքսային ոլորտներում իրականացվող նախաձեռնությունների վերաբերյալ անհրաժեշտ հանրային կարծիքի ձևավորմանը:

Կատարողը պարտավոր է՝

Ծառայությունների մատուցման շրջանակում կազմակերպել և կառավարել պրոակտիվ հրապարակումները՝ ապահովելով նախաձեռնությունների իրագործման միասնականությունը: ՊԵԿ ռազմավարական նախաձեռնություններին համահունչ թեմաներն անհրաժեշտ է շրջանառել թիրախային լսարաններում՝ կիրառելով լայն գործիքակազմ, այդ թվում՝

1.Ծառայությունների մատուցման ընթացքում կատարողը պետք է պատրաստի անիմացիոն 3 տեսահոլովակ: Տեսահոլովակների բովանդակությունը պետք է բխի ՊԵԿ ռազմավարական նախաձեռնություններից: Տեսահոլովակները պետք է հանրամատչելի ձևով հանրությանն իրազեկեն հարկային և մաքսային ոլորտներում իրականացվող

բարեփոխումների, ընթացակարգային փոփոխությունների մասին կամ համահունչ լինեն հարկերի վճարման մշակույթի արմատավորման սկբունքին: Տեսահոլովակներից 2-ի տևողությունը պետք է լինի 50-60 վայրկյանի սահմաններում, 1 տեսահոլովակի տևողությունը՝ մինչև 10 վայրկյան: Տեսահոլովակները պետք է ունենան առնվազն Full HD որակ:

Վերոնշյալ 3 տեսահոլովակի դեպքում կատարողը պետք է ապահովի 2 տեսահոլովակների հրապարակումը լրատվական-վերլուծական 3 կայքում՝ գովազդային հարթակում (կայքի գլխավոր էջում կամ նյութերի մեջ): Յուրաքանչյուրը ցուցադրել 2 ամիս՝ նախապես համաձայնեցնելով պատվիրատուի համապատասխան ստորաբաժանման հետ: Երրորդ՝ կարճ տեսահոլովակը հրապարակել լրատվական-վերլուծական 1 կայքում՝ գովազդային հարթակում (տեսանյութերից առաջ): Ցուցադրել 2 ամիս՝ նախապես համաձայնեցնելով պատվիրատուի համապատասխան ստորաբաժանման հետ:
Տեսահոլովակները տարածել նաև սոցիալական ցանցերի (facebook, instagram կամ համարժեք այլ հարթակ) գովազդային հարթակներով՝ ըստ համապատասխան թիրախային լսարանների (թիրախային լսարանների ընտրությունը քննարկել պատվիրատուի հետ): Տեսահոլովակներն այս եղանակով շրջանառել առնվազն 1 շաբաթ՝ ամեն օր: Տեսահոլովակները սոցիալական ցանցերի գովազդային հարթակներում տարածելու վերաբերյալ ներկայացնել նաև էկրանից արված նկարը (screenshot):

2.Ծառայությունների մատուցման շրջանակում կատարողը պարտավոր է ապահովել 3 կարճ տեսահոլովակի (մինչև 15 վայրկյան տևողությամբ, յուրաքանչյուրը՝ 1 ամիս) հրապարակում մայրաքաղաքի առավել բանուկ հատվածներում (համաձայնեցնել պատվիրատուի հետ)՝ 2 մեծ և 1 փոքր LED էլեկտրոնային էկրանով:

3.Կատարողը պարտավոր է ծառայությունների մատուցման շրջանակում կազմակերպել և պատրաստել 4 հարցազրույց, 1 քննարկում և 5 հոդված՝ ապահովելով հրապարակումը:

- *Ապահովել 2 հոդվածի և 2 հարցազրույցի պատրաստումն ու հրապարակումը տպագիր մամուլում (առնվազն 2 տարբեր տպագիր մամուլ)՝ Հայաստանի Հանրապետությունում լույս տեսնող և ողջ հանրապետությամբ տարածվող օրաթերթերում և շաբաթաթերթերում, մնացած 3 հոդվածի և 2 հարցազրույցի հրապարակումն ապահովել լրատվական-վերլուծական և ըստ ոլորտների մասնագիտացված կայքերում (առնվազն 3 տարբեր կայքեր): Կայքերում հրապարակման համար նախատեսված հարցազրույցները*

պետք է կազմակերպվեն և հրապարակվեն կայքերի՝ առցանց հեռարձակվող, հարցազրույցի ձևաչափով հաղորդումներով (նվազագույնը 10 րոպե տևողությամբ):

- *Հարցազրույցներ տվողները կարող են լինել ինչպես ՊԵԿ համապատասխան պաշտոնյաներ, այնպես էլ փորձագետներ, ոլորտային մասնագետներ, հասարակական կարծիք ձևավորող անհատներ, հայտնի գործիչներ և այլն (հարցազրույց տվողների ընտրությունը քննարկել պատվիրատուի հետ):*
- *Քննարկումը պետք է կազմակերպվի և հրապարակվի լրատվական-վերլուծական կայքում՝ նվազագույնը 15 րոպե տևողությամբ հաղորդմամբ:*
- *Հարցազրույցները, հոդվածները, քննարկումը տարածել նաև սոցիալական ցանցերի գովազդային հարթակներով՝ յուրաքանչյուրը՝ 3 օր (թիրախային լսարանների ընտրությունը քննարկել պատվիրատուի հետ): Հարցազրույցները, հոդվածները, քննարկումները սոցիալական ցանցերի գովազդային հարթակներում տարածելու վերաբերյալ ներկայացնել նաև էկրանից արված նկարը (screenshot):*
- *Հատուկ պայմաններ*

**Բոլոր հրապարակումների (հարցազրույց, հոդված, քննարկում) թեման, ուղղվածությունը և այլ մանրամասներ համաձայնեցնել պատվիրատուի համապատասխան ստորաբաժանման հետ:*

** Յուրաքանչյուր տեսահոլովակի պատրաստումն սկսելուց առաջ պատվիրատուի հետ համատեղ որոշել ուղենիշերը, անհրաժեշտության դեպքում պատվիրատուն կատարողին կտրամադրի թեմայի վերաբերյալ տեղեկատվություն:*

**Տեսահոլովակների սցենարը համաձայնեցնել պատվիրատուի հետ:*

**Տեսահոլովակները պատրաստելու ընթացքում՝ նախքան հրապարակումը, պատվիրատուի պահանջով կատարողը պարտավոր է ուղղումներ մտցնել տեսահոլովակներում, մինչև վերջնական հաստատումը:*

**Պատվիրատուն էլեկտրոնային նամակագրությամբ համաձայնությունը տալիս է առավելագույնը 7 օրվա ընթացքում:*

**Հասարակության հետ կապերի վերոնշյալ յուրաքանչյուր նախաձեռնության վերաբերյալ տրամադրել հաշվետվություն ամսվա կտրվածքով՝ էլեկտրոնային և թղթային եղանակներով: Հրապարակումների առցանց հասանելիության դեպքում ներկայացնել նաև էլեկտրոնային հղումները: Հաշվետվության մեջ ներառել նաև բոլոր հրապարակումները. տպագիր թերթերի դեպքում՝ թերթի տվյալ համարը (կամ էջի պատճենը), կայքերի դեպքում՝*

հրապարակումը պարունակող էջը՝ տպված տարբերակով կամ էկրանից արված նկարով (screenshot), որտեղ կարտացոլվի նաև հրապարակման հարթակի, օրվա, ժամի մասին տեղեկատվությունը, կայքերում տեսանյութի տեսքով հրապարակումների դեպքում՝ էկրանից արված նկարը (screenshot), որտեղ կարտացոլվի նաև հրապարակման հարթակի, օրվա, ժամի մասին տեղեկատվությունը, հեռուստաընկերությունների և LED էլեկտրոնային էկրաններով կարճ տեսահոլովակների հեռարձակումների դեպքում՝ ներկայացնել հեռարձակման մանրամասների վերաբերյալ տեղեկանքներ:

** Հասարակության հետ կապերի վերոնշյալ բոլոր միջոցառումների յուրաքանչյուր քայլի նախապատրաստման և իրագործման ժամկետը, տեխնիկական և բովանդակային մանրամասները ծառայության մատուցման ընթացքում հստակեցնել պատվիրատուի հետ:*

** Կատարողը պարտավոր է պատվիրատուի կողմից էլեկտրոնային նամակագրությամբ ծառայության մատուցման պահանջը ներկայացնելուց հետո, ապահովել հարցազրույցների, հոդվածների և քննարկումների պատրաստումն ու հրապարակումը դրանց իրագործման պահանջը ծագելուց առնվազն 20-30 օրվա ընթացքում, տեսահոլովակների դեպքում՝ պատրաստման համար՝ 20-25 օրվա, իսկ հրապարակման համար 20-30 օրվա ընթացքում՝ պատվիրատուի համաձայնությամբ:*

** Տեսահոլովակները պատվիրատուին հանձնել յուրաքանչյուրը 2-ական CD կրիչով: Բոլոր տեսահոլովակները տրամադրել նաև 1 USB կրիչով»:*

Միաժամանակ արձանագրում եմ, որ Ընթացակարգի հրավերով Հավելված 2.1-ը՝ մատուցվելիք ծառայությունների միավոր գների ցանկը, սահմանվել է հետևյալ տեսքով՝

Հավելված 2.1

«ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/009» ծածկագրով

գնանշման հարցման հրավերի

ՄԱՏՈՒՑՎԵԼԻՔ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐ ԳՆԵՐԸ

Հ/Հ	Ծառայության տեսակ	Միավորի գին /ՀՀ դրամ/
1.	Անիմացիոն կարճ տեսահոլովակի պատրաստում՝ մինչև 10 վրկ տևողությամբ	
2.	Անիմացիոն կարճ տեսահոլովակի շրջանառում սոցիալական ցանցերի գովազդային հարթակներով առնվազն 1 շաբաթ (ամեն օր)	
3.	Անիմացիոն կարճ տեսահոլովակի հրապարակում լրատվական-վերլուծական կայքի գովազդային հարթակում՝ 2 ամիս	
4.	Անիմացիոն տեսահոլովակի պատրաստում՝ մինչև 50-60 վրկ. տևողությամբ	
5.	Անիմացիոն տեսահոլովակի հրապարակում լրատվական-վերլուծական կայքի գովազդային հարթակում՝ 2 ամիս	

6.	Անիմացիոն տեսահոլովակի շրջանառում սոցիալական ցանցերի գովազդային հարթակներով՝ առնվազն 1 շաբաթ (ամեն օր)	
7.	Հարցազրույցի պատրաստում և հրապարակում տպագիր մամուլում (Հայաստանի Հանրապետությունում լույս տեսնող և ողջ հանրապետությամբ տարածվող օրաթերթ կամ շաբաթաթերթ)	
8.	Հարցազրույցի պատրաստում և հրապարակում լրատվական-վերլուծական կամ ըստ ոլորտի մասնագիտացված կայքում	
9.	Հարցազրույցի շրջանառում սոցիալական ցանցերի գովազդային հարթակներով՝ 3 օր	
10.	Հոդվածի պատրաստում և հրապարակում տպագիր մամուլում (Հայաստանի Հանրապետությունում լույս տեսնող և ողջ հանրապետությամբ տարածվող օրաթերթ կամ շաբաթաթերթ)	
11.	Հոդվածի պատրաստում և հրապարակում լրատվական-վերլուծական կամ ըստ ոլորտի մասնագիտացված կայքում	
12.	Հոդվածի շրջանառում սոցիալական ցանցերի գովազդային հարթակներով՝ 3 օր	
13.	Քննարկման կազմակերպում և հրապարակում լրատվական-վերլուծական կամ ըստ ոլորտի մասնագիտացված առաջատար կայքի՝ նվազագույնը 15 րոպե տևողությամբ, քննարկում-բանավեճի ձևաչափ ունեցող հաղորդմամբ	
14.	Քննարկման շրջանառում սոցիալական ցանցերի գովազդային հարթակներով՝ 3 օր	
15.	Կարճ տեսահոլովակի (մինչև 15 վայրկյան տևողությամբ) հրապարակում մայրաքաղաքի առավել բանուկ հատվածում՝ փոքր LED էլեկտրոնային էկրանով՝ 3 ամիս	
16.	Կարճ տեսահոլովակի (մինչև 15 վայրկյան տևողությամբ) հրապարակում մայրաքաղաքի առավել բանուկ հատվածում՝ մեծ LED էլեկտրոնային էկրանով՝ 3 ամիս	

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 2-ի 2.5-րդ կետով սահմանվել է, որ Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված գնային առաջարկ՝ համաձայն Հավելված N 2-ի, որին կցվում է մատուցվելիք ծառայությունների միավոր գների ցանկը՝ համաձայն Հավելված 2.1-ի:

«ԷԼԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացվել է Հավելված N 2-ը՝ գնային առաջարկը՝ հետևյալ տեսքով՝

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/009» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, «Էլիքս» ՍՊԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	**Ծառայության անվանումը**	**Արժեք** (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) **/տառերով և թվերով/**	**ԱԱՀ* /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	***2***	***3***	***4***	***5=3+4***
1	Հասարակության հետ կապերի ծառայություններ	7 070 000 /յոթ միլիոն յոթանասուն հազար/		7 070 000 /յոթ միլիոն յոթանասուն հազար/

Ընկերությունը հայտով միաժամանակ գնային առաջարկին կից ներկայացրել է Հավելված 2.1-ը՝ մատուցվելիք ծառայությունների միավորի գները՝ հետևյալ տեսքով՝

Հավելված 2.1

«ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/009» ծածկագրով

գնանշման հարցման հրավերի

ՄԱՏՈՒՑՎԵԼԻՔ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐ ԳՆԵՐԸ

Հ/Հ	Ծառայության տեսակ	Միավորի գին /ՀՀ դրամ/
1.	Անիմացիոն կարճ տեսահոլովակի պատրաստում՝ մինչև 10 վրկ տևողությամբ	120000
2.	Անիմացիոն կարճ տեսահոլովակի շրջանառում սոցիալական ցանցերի գովազդային հարթակներով առնվազն 1 շաբաթ (ամեն օր)	130000
3.	Անիմացիոն կարճ տեսահոլովակի հրապարակում լրատվական-վերլուծական կայքի գովազդային հարթակում՝ 2 ամիս	300000
4.	Անիմացիոն տեսահոլովակի պատրաստում՝ մինչև 50-60 վրկ. տևողությամբ	350000
5.	Անիմացիոն տեսահոլովակի հրապարակում լրատվական-վերլուծական կայքի գովազդային հարթակում՝ 2 ամիս	600000
6.	Անիմացիոն տեսահոլովակի շրջանառում սոցիալական ցանցերի գովազդային հարթակներով՝ առնվազն 1 շաբաթ (ամեն օր)	130000
7.	Հարցազրույցի պատրաստում և հրապարակում տպագիր մամուլում (Հայաստանի Հանրապետությունում լույս տեսնող և ողջ հանրապետությամբ տարածվող օրաթերթ կամ շաբաթաթերթ)	400000
8.	Հարցազրույցի պատրաստում և հրապարակում լրատվական-վերլուծական կամ ըստ ոլորտի մասնագիտացված կայքում	650000
9.	Հարցազրույցի շրջանառում սոցիալական ցանցերի գովազդային հարթակներով՝ 3 օր	80000
10.	Հոդվածի պատրաստում և հրապարակում տպագիր մամուլում (Հայաստանի Հանրապետությունում լույս տեսնող և ողջ հանրապետությամբ տարածվող օրաթերթ կամ շաբաթաթերթ)	500000
11.	Հոդվածի պատրաստում և հրապարակում լրատվական-վերլուծական կամ ըստ ոլորտի մասնագիտացված կայքում	500000
12.	Հոդվածի շրջանառում սոցիալական ցանցերի գովազդային հարթակներով՝ 3 օր	80000
13.	Քննարկման կազմակերպում և հրապարակում լրատվական-վերլուծական կամ ըստ ոլորտի մասնագիտացված առաջատար կայքի՝ նվազագույնը 15 րոպե տևողությամբ, քննարկում-բանավեճի ձևաչափ ունեցող հաղորդմամբ	750000
14.	Քննարկման շրջանառում սոցիալական ցանցերի գովազդային հարթակներով՝ 3 օր	80000
15.	Կարճ տեսահոլովակի (մինչև 15 վայրկյան տևողությամբ) հրապարակում մայրաքաղաքի առավել բանուկ հատվածում՝ փոքր LED էլեկտրոնային էկրանով՝ 3 ամիս	1200000
16.	Կարճ տեսահոլովակի (մինչև 15 վայրկյան տևողությամբ) հրապարակում մայրաքաղաքի առավել բանուկ հատվածում՝ մեծ LED էլեկտրոնային էկրանով՝ 3 ամիս	1200000

Այսպիսով՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետով սահմանվում է, որ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և

պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան կարգավորումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ</u>՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: <u>Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:</u>***

Ընդ որում՝ Կարգի 43-րդ կետով սահմանվում է, որ հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի ***<u>արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը</u>***:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.03.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ «Էլիքս» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկին կից ներկայացված մատուցվելիք ծառայությունների միավոր գներում (Հավելված 2.1) առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ մատուցվելիք ծառայությունների միավոր գների և տեխնիկական բնութագրում նշված քանակների հանրագումարը չի համապատասխանում Ընկերության կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի (Հավելված 2) ընդհանուր գումարին:

Վերոգրյալ իրավանորմերի մեկնաբանության և սույն գործի փաստական հանգամանքների համադրված վերլուծության արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 41-րդ և 43-րդ կետերով սահմանված իմպերատիվ դրույթները, այն է՝ հայտերի բացման և գնահատման նիստի

ընթացքում Ընկերության կողմից Հավելված 2.1-ում՝ մատուցված ծառայությունների միավոր գներում, արձանագրելով անհամապատասխանություն հրավերով սահմանված պահանջների նկատմամբ՝ հանձնաժողովի արձանագրության և Ընկերությանն ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն չեն նկարագրվել հայտնաբերված անհամապատասխանությունները, որպիսի պայմաններում ինչպես Ընկերության, այնպես էլ սույն գործի քննության շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի համար անհասկանալի է մնում, թե կոնկրետ ի՞նչ անհամապատասխանություններ են առկա հայտի 2.1 Հավելվածում և ի՞նչ շտկում պետք է իրականացվեր Ընկերության կողմից, այն դեպքում, երբ Ընկերության կողմից ներկայացված Հավելված 2.1-ը՝ մատուցվելիք ծառայությունների միավոր գները, համապատասխանում է Ընթացակարգի հրավերով սահմանված Հավելված 2.1-ին:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Էլիքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.03.2021թ. թիվ 26/26-1/4732-2021 գրությամբ «Էլիքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**